Տեղեկատվական թերթիկ

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Cooperation Office South Caucasus

Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալության Հարավային Կովկասի գրասենյակ

Հունվար 2016թ.

Արագ արձագանքման տարածաշրջանային խմբեր (ԱԱՏԽ)՝ հանուն Հայաստանում հզորացված փրկարարական ապակենտրոնացված համակարգի

Փուլ II

Տվյալներ

Երկիր. Հայաստան

Տևողություն. մարտ 2015թ. – սեպտեմբեր 2016թ.

Բյուջե. 815‘000 շվեյցարական ֆրանկ

Ծրագրի գործընկերներ. Ծրագիրն իրականացվում է Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գրասենյակի կողմից՝ հետևյալ գործընկերների հետ.

- Արտակարգ իրավիճակների նախարարություն(ԱԻՆ)
- ԱԻՆ-ի ներքո Հայաստանի փրկարար ծառայություն (ՀՓԾ)
- ԱԻՆ-ի ներքո Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա (ՃԿՊԱ)
- ՀՓԾ-ի ներքո Ճգնաժամային կառավարման կենտրոններ (ՃԿԿ)

Գերագույն նպատակը

Ծրագրի գերագույն նպատակն է փրկել կյանքեր և նվազեցնել աղետների հետևանքով առաջացող տնտեսական վնասների մակարդակը: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է ամրապնդել աղետների արձագանքման ապակենտրոնացված համակարգը և հզորացնել պատկան պետական հաստատությունների կարողությունները:

Ծրագրի խնդիրները

Ծրագրի Փուլ II-ի խնդիրն է հիմնել լրացուցիչ տարածաշրջանային փրկարար թիմեր՝ ընդլայնելու առկա փրկարար կարողությունների աշխարհագրական ծածկույթը:

Ի լրումն, աջակցություն կցուցաբերվի Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային՝ առաջարկելու և ապահովելու փրկարար թիմերի գիտելիքների շարունակական փոխանցում՝ թիմերի հմտությունները մշտապես բարձր մակարդակի վրա պահելու նպատակով:

Հիմնավորում

Հայաստանում բնական աղետների հավանականությունը շատ մեծ է, հիմնականում երկրաշարժերի (օրինակ՝ 1988թ. Սպիտակի երկրաշարժը), բայց նաև սողանքների, ջրհեղեղների, ձնահյուսքերի և մարդածին աղետների, որոնք լուրջ մարդկային և տնտեսական կորուստների պատճառ կարող են դառնալ:

Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալությունը իր օժանդակությունն Հայաստանին սկսել է ցուցաբերել 1988թ. երկրաշարժից հետո, և սկսած 2004թ. աշխատում է ԱԻՆ-ի հետ՝ պատրաստվածության տեղական և կենտրոնական համակարգերի բարելավման ուղղությամբ:

2004-2014թթ. ընթացքում ԶՀՇԳ-ն աջակցել է Հայաստանի Հանրապետությանը ամբողջական և ապակենտրոնացված փրկարարական համակարգ հիմնելու գործում՝ «Արձագանք» և «Բժշկական ստորաբաժանումներ» ծրագրերի իրականացման միջոցով: Դրական արդյունքների և կառավարության հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ, ԶՀՇԳ-ն շարունակել է աշխատել փրկարարական համակարգի հետագա բարելավման ուղղությամբ՝ միջազգային չափորոշիչների համաձայն, հիմնելով, վերապատրաստելով և սարքավորումներով հագեցնելով երեք Արագ արձագանքման տարածաշրջանային թիմ Երևանում, Շիրակի և Սյունիքի մարզերում: Ծրագրի Փուլ I-ի ընթացքում ընդհանուր առմամբ 141 մասնագետ է վերապատրաստվել այնպիսի կարողությունների ոլորտներում, որոնք թույլ են տալիս բարդ իրավիճակներում ինքնուրույն գործել:

Ծրագրի գործողությունները

- Լոռու և Տավուշի մարզերում հիմնել Արագ արձագանքման երկու լրացուցիչ տարածաշրջանային թիմ՝ 94 բազմապրոֆիլ անդամներով, միջազգային չափորոշիչների համապատասխան
- Վերապատրաստել թիմերը բազմամակարդակ փրկարարության ոլորտում՝ համաձայն Որոնման և

փրկարարության միջազգային խորհրդատվական խմբի ուղեցույցի

- Տրամադրել և պահեստավորել փրկարարական սարքավորումները Արագ արձագանքման երկու տարածաշրջանային թիմերում և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում

- Բարելավել Արագ արձագանքման տարածաշրջանային թիմերի գործուղման և համակարգման ընթացակարգերը

- Հզորացնել Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կարողությունները՝ ապահովելու Արագ արձագանքման տարածաշրջանային թիմերի շարունակական վերապատրաստումը

- Ամրապնդել ոտակարգ իրավիճակների նախարարության և Որոնման և փրկարարության միջազգային խորհրդատվական խմբի միջև գոյություն ունեցող կապերը

Ակնկալվող արդյունքները

- Արագ արձագանքման երկու լրացուցիչ տարածաշրջանային թիմերն ինտեգրված են արձագանքման առկա պլաններում և ունակ
- են ազգային և տարածաշրջանային մակարդակներում ցուցաբերել աղետի արձագանքման պատշաճ մակարդակ՝ համապատասխանորեն կենտրոնական և տարածաշրջանային կառավարությունների կողմից իրականացվող համակարգման ներքո:

- Արագ արձագանքման տարածաշրջանային թիմերի շարունակական վերապատրաստման գործող համակարգ:

Կոնտակտային տվյալներ.

Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալություն Հարավային Կովկասի գրասենյակ

Շվեյցարիայի դեսպանատուն

Մելիք Ադամյան փողոց 2/1
Երևան 0010, Հայաստան

Հեռախոս. +374 10 52 98 60
Ֆաքս. +374 10 52 98 61
www.swisscoop.am
www.facebook.com/SwissCooperationSouthCaucasus
yerevan@eda.admin.ch